

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 15.05.19թ. կայացած թիվ 11.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և դեկավարների հաստատում:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. Կուրսատորների հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝ Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և դեկավարների հաստատում:**

**Ելույթ ունեցավ** օպտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ալավերդյանը: Նա ներկայացրեց օպտիկայի ամբիոնի հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Պետրոս Արմենակի Պետրոսյանի գիտական թեմայի և գիտական դեկավարի հաստատման հարցը: Ալավերդյանը ներկայացրեց առաջակվող թեման, որը արդիական է, ինչպես նաև ունի գիտական ու կիրառական նշանակություն:

**Որոշեցին՝** Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Պետրոս Արմենակի Պետրոսյանի հետևյալ թեման՝ «Մետաղական նանոմասնիկների համակարգերում որոշ պլազմոնային երևույթների ուսումնասիրությունը» Ա.04.21 «Լազերային ֆիզիկա» մասնագիտությամբ:

Գիտական դեկավար նշանակել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոման Բախշիի Ալավերդյանին:

**Լսեցին՝ Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:**

**Ելույթ ունեցավ** օպտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ալավերդյանը: Նա ներկայացրեց օպտիկայի ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Կարեն Արայի Պետրոսյանի՝ հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները:

Ալավերդյանը նշեց, որ Կ.Ա. Պետրոսյանը ավարտին է հասցրել իր «Լազերով մակաձված հիդրոդինամիկական շարժումը նանոմասնիկներով հարստացված իզոտրոպ և անիզոտրոպ հեղուկներում» աշխատանքը և ներկայացրել է պաշտպանության: Սեդմագիրն արդեն բաժանված է, իսկ պաշտպանությունը նշանակված է 2019թ.-ի հունիսի 29-ին:

**Որոշեցին՝** ատեստավորել Կարեն Արայի Պետրոսյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Ռ. Ալավերդյանը** ներկայացրեց նաև օպտիկայի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Հարություն Հովհաննեսի Հովակիմյանի՝ հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները: Ալավերդյանը նշեց, որ Հովակիմյանը «Լույսի բևեռացման տարածական դինամիկական հեղուկ բյուրեղներում և նրանց ներկանյութային խառնուրդներում» թեմայի շրջանակներում իրականացրել է որոշ փորձարարական աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա տպագրության է ուղարկվել 1 հոդված և 4 թեզիս: Ասպիրանտը հանձնել է որակավորման բոլոր անհրաժեշտ քննությունները: Ինչպես նաև Հովակիմյանը ֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի ա1-ին կուրսում վարել է «Ոչ գծային օպտիկա» դասընթացի սեմինար պարապմունքներ:

**Որոշեցին՝** ատեստավորել Հարություն Հովհաննեսի Հովակիմյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Ելույթ ունեցավ** միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Բալաբեկյանը: Նա ներկայացրեց միջուկային ֆիզիկայի ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Գոռ Հրաչիկի Նիկողոսյանի՝ հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները: Բալաբեկյանը նշեց, որ ասպիրանտը ունի 5 տպագրված հոդվածներ գրախոսվող ամսագրերում: Նա հանձնել է 2 պարտադիր դասընթացի քննություն:

**Որոշեցին՝** ատեստավորել Գոռ Հրաչիկի Նիկողոսյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Ելույթ ունեցավ** տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Սահարյանը: Նա ներկայացրեց տեսական ֆիզիկայի ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ

Հակոբի Միմոնյանի՝ հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները: Սահարյանը նշեց, որ անցած տարվա ընթացքում ասպիրանտը կատարել է ծավալուն աշխատանք, ունի 4 տպագրված հոդված և պատրաստ է պաշտպանել թեկնածուական աստենախոսությունը

**Որոշեցին՝** ատեստավորել Դավիթ Հակոբի Միմոնյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

**Լսեցին՝ Կուրատորների հաշվետվությունները:**

**Ելույթ ունեցավ** միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ **Ա. Բալաբեկյանը**: Նա նշեց, որ <<Միջուկային ռեակտորների ֆիզիկա>> մասնագիտությամբ ֆիզիկայի ֆակուլտետի առաջին կուրսում կուրատոր է հանդիսանում Ռ. Գրիգորյանը, ով առողջական խնդիրների պատճառով ներկա չէ նիստին: Բալաբեկյանը ներկայացրեց, որ առաջին կուրսում սովորում են 5 ուսանող: Ուսանողների ներկայացվել է գրադարանից օգտվելու կարգը, զեղչերից օգտվելու կարգը և այլն: Ուսումնառության ընթացքում ծագած խնդիրների դեպքում ուսանողները միշտ դիմում են կուրատորին և նրա միջնորդությամբ խնդիրները լուծվում են:

Ելույթ ունեցավ ֆիզիկա մասնագիտությամբ առաջին կուրսի կուրատոր **Լ. Ալոյանը**: Նա ներկայացրեց, որ առաջին կուրսում սովորում են 19 ուսանող: Ուսանողներին ներկայացվել են գրադարանից օգտվելու, զեղչային համակարգից օգտվելու և այլ կարգեր: Մշտապես տեղյակ է եղել ուսումնառության ընթացքում ուսանողների մոտ ծագած խնդիրներին և աջակցել է դրանց լուծմանը:

**Որոշեցին՝** կուրատորների աշխատանքը գնահատել բավարար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան